մար՝ —«Ձեր ասելով քրդերը համակրում են հայերին՝ ասացի՝ բայց ի՞նչպէս մեկնենք այն անթիւ հարստահարութիւնները՝ որ քրդերը կատարում են Տաճկա—Հայաստանում։—

«Այդ բոլորը հեշտ պարզելու բաներ են՝ ասում էր խանը։ Ձեր խնդիրը երևան գալուց զկնի թիւրքերը մեծ բարեկամութիւն սկսեցին ցոյց տալ մեզ՝ և մեր ձեռքով կամենում էին կրակ բռնել այդ աշխարհը սրբել հայերից։ Դորա համար շատ մեծ գաղտնի աշխատութիւններ է եղել և լինում է։ Ի նկատի առած այդ մեծ հրապուրանքները քրդերը մի երևելի վնաս չեն տուել հայերին. միևնոյն սովորական յափշտակութիւններն են որ կրկնվում են։ Այս տարի սահմանից անց են կացրել յափշտակած եօթ հազար ոչխար և երեք հազար տաւար՝ որ անցեալ տարուան հետ համեմատած՝ զգալի զանազանութիւն է անում։ Այս տարուայ յափշտակութիւնները հաւասարվում են անցեալ տարուայ յափշտակութիւնների քառորդ մասին։ Ճշմարիտ է որ այդ բոլոր յափշտակողները քրդերն են՝ բայց ո՞ւր են տարել՝ ո՞ւր են այժմ այդ տաւարները և ոչխարները։ Հայերը եթէ կամենում են ճանաչել իւրեանց թշնամին՝ գտնել յափշտակված անասունները՝ պէտք է որոնեն փաշաների՝ կամ խաների մօտ։ Պարսկաստանում թող գնան Մագու՝ այն տեղ